



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

#### ՈՐՈՇՈՒՄ N 16-Ն

«24» մայիսի 2017 թվական

գյուղ Հայկավան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

#### **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 51-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

#### 1. Եկամտային մասում

1) Բաժին 46, ենթախումբ 7 «Համայնքային հիմնարկների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող այլ վճարներ » տողի 0.0 (զրո ) դրամ թիվը փոխարինել 650.0 հազար (վեց հարյուր հիսուն հազար) դրամ թվով:

#### 2. Ծախսային մասում

1) «Պահուստային միջոցներ » 4891 հոդվածի 11.1.0 դասակարգման 7273.6 հազար (յոթ միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր ) դրամ թիվը փոխարինել 1773.6 հազար (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր ) դրամ թվով:

2) «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածի 10.4.1 դասակարգման 2500.0 հազար (երկու միլիոն հինգ հարյուր հազար ) դրամ թիվը փոխարինել 1500.0 հազար (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ թվով:

3) «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածի 0.0 (զրո) դրամ թիվը փոխարինել 7150.0 հազար (յոթ միլիոն հարյուր հիսուն հազար) դրամ թվով :

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

	Կողմ՝ (5)	Դեմ՝ (0)	Ձեռնպահ՝ (0)
Ավետիսյան Մկրտիչ	<i>[Signature]</i>		
Բաղդասարյան Սամվել	<i>[Signature]</i>		
Եղոյան Սպարտակ	<i>[Signature]</i>		
Մանուկյան Աշոտ	<i>[Signature]</i>		
Մարտիրոսյան Անդրանիկ	<i>[Signature]</i>		

ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

*[Signature]* Ա.ՄԻՈՅԱՆ

«24» մայիսի, 2017 թվական  
գյուղ Հայկազան



